

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՎ
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ**

1. Ընդհանուր դրույթներ
<p>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տիեզերական և գիտատեխնիկական գործունեության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 24-32.5-Մ2-16)</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:</p> <p>1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության մյուս գլխավոր մասնագետներից մեկը կամ ավագ մասնագետը:</p> <p>1.4. Աշխատավայրը ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան 3/3</p>
2. Պաշտոնի բնութագիր
<p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները Գործառույթները՝</p> <ol style="list-style-type: none">1) իրականացնում է աջակցությունը գիտատեխնիկական գործունեությանն ու տեխնոլոգիական կամրջմանը՝ իրականացնելով գիտության և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխկապակցված զարգացումը,2) իրականացնում է օժանդակություն գիտական հաստատությունների, հետազոտական կենտրոնների և արտադրական հատվածի համագործակցությանը՝ համատեղ նախագծերի իրականացման, համաֆինանսավորվող կիրառական հետազոտությունների, գիտական արդյունքների առևտրայնացման և բարձր տեխնոլոգիական նորարարական լուծումների մշակման միջոցով,3) իրականացնում է աջակցություն գիտնականների, ճարտարագետների և տեխնոլոգիական մասնագետների վերապատրաստմանը, մասնագիտական հմտությունների կատարելագործմանը և նրանց ներգրավմանը բարձր տեխնոլոգիական ոլորտներում՝ նպատակային կրթական ծրագրերի, ինչպես նաև մասնագիտական շարժունակության, համագործակցության և փորձի փոխանակման նախաձեռնությունների միջոցով,4) իրականացնում է գիտության, տեխնոլոգիայի և արդյունաբերության փոխկապակցված զարգացման քաղաքականության ձևավորում՝ ոլորտային ռազմավարությունների համադրմամբ, տվյալահեն մոտեցմամբ՝ առաջնորդվելով երկարաժամկետ տեսլականով,5) իրականացնում է տիեզերական գործունեության բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացման ռազմավարական ուղղությունների մշակումը՝ նպաստելով ոլորտի կայուն զարգացմանը և միջազգային համագործակցությանը,6) իրականացնում է զարգացման պետական ծրագրերի և միջոցառումների մշակումը, դրանց իրականացումը, արդյունքների ապահովումը և մշտադիտարկումը՝ բացառությամբ տիեզերական կապի և տիեզերական համացանցի ծառայությունների ոլորտների,7) իրականացնում է տիեզերական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում գիտական հետազոտությունների և փորձարարական աշխատանքների իրականացմանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական ակտերի և ստանդարտների, ինչպես նաև ոլորտի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի և վարչական ընթացակարգերի մշակումը,8) իրականացնում է տիեզերական գործունեության ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման, մշակման, կնքման և դրանցով ստանձնած հանձնառությունների ու պարտավորությունների կատարման գործընթացը,9) իրականացնում է տիեզերական գործունեության ոլորտի ռազմավարական ծրագրերի ընտրությունը՝ նպատակ ունենալով ապահովել նրանց մրցունակությունը միջազգային դոմինների և վարկատու կազմակերպությունների ֆինանսավորման շրջանակներում,

- 10) իրականացնում է աջակցություն տիեզերական գործունեության ոլորտում, այդ թվում՝ բնական և տեխնիկական գիտությունների ոլորտներում, գիտական հետազոտությունների և փորձարարական աշխատանքների իրականացմանն ուղղված,
- 11) իրականացնում է աջակցություն գիտության արդյունքների գործնական կիրառման ու տնտեսության մեջ ներդրման աշխատանքներին (տեխնոլոգիական փոխանցում, գիտաարդյունաբերական համագործակցություն),
- 12) իրականացնում է օժանդակում գիտական կազմակերպությունների, բուհերի, մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների միջև արդյունավետ փոխհամագործակցության հարթակի կառուցմանը,
- 13) իրականացնում է աջակցություն գիտահեն ստարտափների, տեխնոլոգիական ձեռնարկությունների և ինովացիոն էկոհամակարգի ձևավորմանը:

Իրավունքները՝

- 1) Ստանալ տեղեկատվություն՝ ուղղված Հայաստանի տիեզերական և գիտատեխնիկական ոլորտային ներուժի, գերակայությունների զարգացման ուղղությունների, ինչպես նաև երկարաժամկետ առաջընթացի տեսլականի ձևավորման համար անհրաժեշտ տվյալների սահմանմանը,
- 2) ուսումնասիրել և փաստագրել առկա համագործակցային կապերը գիտական հաստատությունների և ոլորտային արտադրական ընկերությունների միջև, ներառյալ համատեղ ծրագրերը, հետազոտական նախագծերը և փոխգործակցության պլանավորվող ձևաչափերը,
- 3) վերլուծել միջազգային պահանջները և չափանիշները, որոնք վերաբերում են տիեզերական և գիտատեխնիկական գործունեությանը՝ նպատակ ունենալով բացահայտել առկա խնդիրները և գնահատել այդ պահանջների կիրառելիության մակարդակը Հայաստանում,
- 4) ստանալ տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շուկաներում շրջանավոր գիտական գաղափարների, դրանց կոմերցիալիզացիայի մեխանիզմների, արտադրական նմուշների, ինչպես նաև լիցենզավորված պրոդուկտների վերաբերյալ,
- 5) վերլուծել առկա ռեսուրսները, ներառյալ ֆինանսական, մարդկային և նյութատեխնիկական, որոնք անհրաժեշտ են տիեզերական և գիտատեխնիկական ոլորտների կայուն զարգացման համար,
- 6) ստանալ իրավական դաշտի փաստաթղթերը, այդ թվում՝ օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, կարգավորիչ նորմերը և վարչական ընթացակարգերը, որոնք առնչվում են տիեզերական և գիտատեխնիկական գործունեությանը,
- 7) ստանալ գնահատականներ՝ առկա մարդկային ռեսուրսների մասնագիտական կարողությունների և ոլորտի պահանջներին համապատասխան անհրաժեշտ նոր մասնագետների պատրաստվածության վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններից,
- 8) ստանալ և մշակել տեղեկատվություն՝ ոլորտային ծրագրերի վերաբերյալ տվյալների բազաների հավաքագրման, մշակման, պահպանման և փոխանակման միասնական ստանդարտ ձևաչափերի մշակման վերաբերյալ,
- 9) մասնակցել տիեզերական ծրագրերի իրականացման աշխատանքներին, այդ թվում՝ շահագրգիռ պետական և մասնավոր կառույցների հետ համատեղ տիեզերական սարքաշինության նախագծման, փորձարկման և արտադրության փուլերի կազմակերպման գործընթացին,
- 10) ներկայացնել առաջարկություններ տիեզերական բնագավառում միջազգային համագործակցության ծրագրերի և տիեզերական ոլորտի միջազգային առաջատար ընկերությունների ներգրավման աշխատանքների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնակցում է այդ ծրագրերի իրականացմանը.
- 11) մասնակցել տիեզերական բնագավառում կազմակերպվող սեմինարներին, ինչպես նաև աշխատանքային քննարկումներին:

Պարտականությունները՝

- 1) կատարել ոլորտային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մշակման և տվյալների բազաների ձևավորման աշխատանքները՝ սահմանված ձևաչափով,
- 2) կատարել տիեզերական և գիտատեխնիկական ոլորտների միջազգային պահանջների ու զարգացման միտումների ուսումնասիրություն,

- 3) կատարել ՀՀ-ում առկա գիտատեխնիկական ներուժի վերաբերյալ վերլուծությունը, դրանց զարգացման գերակայությունները և ձևավորել երկրի գիտատեխնիկական առաջընթացի միջնաժամկետ և երկարաժամկետ տեսլականը, ներկայացնել Վարչության պետին
- 4) կատարել բարձր տեխնոլոգիական արտադրության ոլորտում գիտականորեն հիմնավորված նոր տեխնոլոգիական լուծումների ներդրման փուլային գործնական մեխանիզմների վերաբերյալ վերլուծությունները, ներառյալ նախահետազոտություն, փորձարկում, տեխնոլոգիական հաստատում և արդյունաբերական կիրառություն, ներկայացնել Վարչության պետին
- 5) Վերլուծել գիտական կազմակերպությունների և ոլորտային արտադրական ընկերությունների միջև արդյունավետ համագործակցության ապահովման, տեխնոլոգիաների փոխանցման, համատեղ նախագծերի և ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորման ուղղությամբ հնարավորությունները, դրանց վերաբերյալ Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ:
- 6) Վերլուծել տիեզերական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում միջազգային ստանդարտներն ու պահանջները՝ գնահատելով դրանց կիրառելիությունը Հայաստանի իրավական, տեխնիկական և ինստիտուցիոնալ դաշտում և ներկայացնել վարչության պետին
- 7) վերլուծել ներքին և արտաքին շուկաներում առկա գիտական գաղափարները, դրանց իրագործման մեխանիզմները, արտադրական նմուշների և լիցենզավորված ապրանքների զարգացումը, ինչպես նաև դրանց հիմքով մրցունակ և որակապես նոր արդյունքների հասնելու հնարավորությունները, ներկայացնել Վարչության պետին
- 8) մշակել տիեզերական և գիտատեխնիկական գործունեության զարգացման ճանապարհային քարտեզը՝ անհրաժեշտ ֆինանսական, մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների պլանավորմամբ և իրականացման մեխանիզմների հստակեցմամբ, իրականացված աշխատանքի վերաբերյալ Վարչության պետին ներկայացնել նախագիծ և առաջարկություններ,
- 9) Վերլուծել տիեզերական և գիտատեխնիկական գործունեության ոլորտի կարգավորման, վարչական ընթացակարգերի պարզեցման և ոլորտի զարգացման խթանման նպատակով Վարչության կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը,
- 10) կատարել տիեզերական և գիտատեխնիկական ոլորտներում ներգրավված մարդկային ներուժի գնահատում, ձևավորել կարողությունների գնահատման համակարգ,
- 11) Վերլուծել տիեզերական և գիտատեխնիկական ոլորտների մասնագետների վերապատրաստման, վերագինման և շարունակական զարգացման ծրագրերի իրականացման պատասխանատու մարմինների գործառույթները, ցանկը և համապատասխան գործառույթային վերլուծությունը ներկայացնել Վարչության պետին,
- 12) կատարել ոլորտային զարգացման ռազմավարություն և քաղաքականության մշակման աշխատանքները՝ հիմնված նորարարական և ստեղծագործական կրթության խթանման, հետազոտական նախագծերի առաջնդման և մասնագիտացված կրթական ծրագրերի վրա,
- 13) Վերլուծել ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա ծրագրերը, դրանց վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ Վարչության պետին,
- 14) գնահատել տիեզերական սարքաշինության ոլորտում առկա տեխնոլոգիական խնդիրները, լուծումների ուղիները և տեղական ներուժը՝ ձևակերպելով հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունները,
- 15) կատարել տիեզերական գիտական հետազոտությունների և գիտատեխնիկական միջազգային համագործակցության խորացմանն ուղղված աշխատանքներ՝ մասնակցելով հեռանկարային նախագծերի քննարկման, մշակման և փորձաքննության գործընթացներին,
- 16) մշակել տիեզերական և բարձր տեխնոլոգիական ոլորտների գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հաշվետվությունների ներկայացման ձևաչափը և ժամկետները,
- 17) մշակել տիեզերական գործունեության ոլորտում պետական քաղաքականությունը՝ համագործակցելով շահագրգիռ կառույցների հետ,
- 18) վերլուծել ՀՀ տիեզերական գործունեության ծրագրերն ու իրականացվող աշխատանքները, կանոնակարգել շահագրգիռ մարմինների հետ համատեղ աշխատանքը,
- 19) մշակել և սահմանել տիեզերական նախագծերի նախագծակոնստրուկտորական, փորձակոնստրուկտորական, փորձատեխնոլոգիական և նախագծատեխնոլոգիական աշխատանքների իրականացման կարգը և պահանջները,
- 20) մշակել տիեզերական գործունեության, այդ թվում սարքաշինության տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և տեխնիկական պայմանները,
- 21) մշակել «հետազոտություն - նախագծում - արտադրություն» փուլերի փոխգործակցության արդյունավետ միջոցներ՝ պահպանելով որակի և հուսալիության չափանիշները,

22) Վերլուծել նորմատիվ իրավական, տեխնիկական ակտեր ու վարչական ընթացակարգերը՝ տիեզերական և գիտատեխնիկական հետազոտական գործունեությունը խթանելու նպատակով, ինչպես նաև ապահովել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների իրականացումը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիտության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: